ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 10-ին տեղի ունեցավ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։ Ներկաները հոտնկայս մեկ բոպե լռությամբ հարգեցին 1915 թ. եղեռնի և Սումգայիթի, 1988 թ. ավերիչ երկրաշարժի և Բաքվի զոհերի, Արցախի ադատ ազգային ինքնորոշման և մայր Հայաստանի հետ վերամիավորման համար պայքարում զոհվածների հիշատակը։ Բացելով ժողովը, ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանն ասաց, որ հանրապետության գիտությունների ակադեմիայի ամբողջ կոլեկտիվը շերմորեն և հետևողականորեն պաշտպանում է Արցախի հիմնահարցում հայ ժողովրդի կամքը։ Արցախի դժվարություններին ու կարիքներին պետք է առանձնակի ուշադրություն նվիրի Հայաստանի գիտական հասարակությունը, այնտեղ պետք է ստեղծվի սեփական գիտական կենտրոն, որի կազմակերպմանը պետք է մասնակցի ակադեմիան։

Չնայած վերջին ժամանակներս մեզ վիճակված բոլոր դժվարություններին, շարունակեց պրեզիդենտը, հարկավոր է լուծել հանրապետության առջև ծառացած հիմնահարցերն ու խնդիրները։ Ակադեմիական գիտության մեջ կարևոր դեր ունեն հիմնարար հետազոտությունները։ Եվ այստեղ մի շարք նվաճումներ կան այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են աստղաֆիզիկան և մաթեմատիկան։ Ընդամենը, հաշվողական տեխնիկան ավելի ու ավելի ինտենսիվ ու լայնորեն է օգտագործվում գիտական տվյալները մշակելիս։ Կարևոր հետազոտություններ են անցկացվել մեխանիկայի, ֆիզիկայի կիրառական հիմնահարցերի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտներում և այլուր։ Հետաքրքրական արդյունքներ են ստացվել հեղուկ բյուրեղների վերաբերյալ։

Վ. Համբարձումյանն ընդգծեց նաև, որ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը պետք է վերակողմնորոշվի դեպի այն հետազոտությունների ուժեղացումը, որոնք կապված են մեր ռեգիոնի առանձնակի սեյսմիկության հետ, զարգացնի երկրաշարժերի կանխատեսման աշխատանքները։ Այս կապակցությամբ նշեց, որ գիտնականները առաջարկել են սեյսմադիտարկումների ամբողջ համակարգի վերազինման նախագիծ, բայց դրա իրականացման և աշխատանքների ֆինանսավորման հարցը առայժմ լուծված չէ կառավարության մակարդակով։ Ծանուցման ծառայության ստեղծման համար միջոցներ չեն հատկացվել։ Չնայած այսօր Պատմության, Գրականության և մյուս ինստիտուտներում անցկացվող հետազոտությունների ամբողջ հրատապությանը, հասարակական գիտություններում և գաղափարախոսության մեջ շատ դանդաղ է տեղի ունենում ազատագրումը դոգմատիկ մտածողության ճնշումից, ասաց պրեզիդենտը։ Քիչ ուշադրություն է դարձվում երիտասարդ կադրերի պատրաստմանը։ Այսօր առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի նաև բուհերին, ոչ միայն գիտական երիտասարդության դաստիարակմանն ու պատրաստմանը, այլև նրա ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորմանը։ Շատ կարևոր է նաև վերակառուցել մոտեցումը դիտական հետազոտությունների նկատմամբ, որանք պետք է կողմնորոշվեն դեպի համաշխարհային նվաճումները, որի համար էլ գիտափորձերի հանդերձավորումը պետք է աելի բարձր որակներ ունենա։ Այս և մյուս տեսակետներից հարկավոր է սերտ համագործակցություն Սփյուռքի հետ։ Վերջում Վ. Համբարձումյանն ասաց, որ սփյուռքահայ բիտնականների հետ կապերի ընդլայնումը կնպաստի ինչպես գիտափորձառական բազայի բարելավմանը, այնպես էլ գիտական հետազոտությունների մակարդակի բարձրացմանը։

ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի 1989 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ Դ. Սեդրակյանը։ Հաշվետու տարում, ասաց նա, տեղի է ունեցել երկու ընդհանուր ժողով, որոնցից մեկը նվիրված էր ակադեմիայի առաջնահերթ խնդիրներին, մյուսը՝ նրա նոր անդամների ընտրությանը։ Վերջինս, սակայն, հնարավորություն չտվեց երիտասարդացնելու ակադեմիայի կազմը. ներկայումս ակադեմիկոսների միջին տարիքը կազմում է 71,1, իսկ թղթակից անդամներինը՝ 62,5։ ԳԱ նախագահության և բյուրոյի նիստերում քննարկվել է ավելի քան 200 հարց, ընդ որում, գլխավոր ուշադրությունը կենտրոնացվել է 3

առաջնային հարցադրումների վրա՝ սեյսմոլոգիա, էկոլոգիա և հասարակագիտության ժամանակակից խնդիրներ։ Քննարկվել և ընդունվել են հանրապետության տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման ժամանակավոր քարտեզները, Լենինականի, Կիրովականի և Սպիտակի վերակառուցման ու հետագա զարգացման տարածքի ընտրության հարցը, ճշտվել է Երևանի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը։ Որոշում է ընդունվել Սպիտակի երկրաշարժի ատլասի ստեղծման մասին։ Մեծ շանքեր են գործադրվել ԳԱ հիմնարկների վերականգնման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ։ Սկսված է Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի շինարարությունը։ Ակադեմիկոս-քարտուղարը միաժամանակ նշեց, որ շափազանց հետ են մնում երկրաշարժի կանխագուշակմանն առընչվող հետազոտությունները. չկա որոշակի սկզբունք կառուցվող ու գոյություն ունեցող շենքերի, կառուցվածքների և սեյսմակայունության վերաբերյալ։ Մշակված չեն ուժեղ երկրաշարժից բնակչությանը պաշտպանելու միջոցառումներ։ Խնդիր դրվեց հանրապետության Մինիստրների խորհրդին կից կազմակերպել մշտական գործող կառավարական հանձնաժողով, որը զբաղվի երկրաշարժերին վերաբերող բոլոր տեսակի հարցերով։ Հանձնաժողովին կից պետք է գործի գիտական խորհուրդ, որպիսին կարող է լինել ակադեմիայի համակարգում ստեղծված սեյսմոլոգիայի և սեյսմակայուն շինարարության պրոբլեմային խորհուրդը։

Անդրադառնալով էկոլոգիայի հիմնահարցերին, զեկուցողը նշեց, որ ակադեմիայի նախագահության և բնության պահպանության պետական կոմիտեի համատեղ որոշմամբ Երկրաբանական գիտությունների ինստիտուտին կից ստեղծվել է նեոսֆերային և էկոլոգիական ուսումնասիրությունների կենտրոն։ ՀԽՍՀ պետպլանին է հանձնված շրջակա միջավայրի պահպանության ծրագիր, մշակվել և դիրեկտիվ մարմիններին են ներկայացվել ռեսուրսների խնայողության և էներգիայի ոչ ավանդական աղբյուրների օգտագործման առաջարկներ։ Կենտրոնի առջև խնդիր է դրվել կոորդինացնել էկոլոգիայի շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքը։

Ակադեմիայի նախագահության գործունեության մեջ տեղ են գտել նաև թերություններ, բացթողումներ, շարունակեց Դ. Սեդրակյանը։ Զգձվում է ԳԱ Լենինականի գիտական կենտրոնի ստեղծումը, չի վերանայված գիտական խորհուրդների ցանցը, թուլացել է հսկողությունը ընդունած որոշումների կատարման նկատմամբ։ Մտահոգության տեղիք է տալիս ներդրվող գյուտերի թվի նվազումը։ Արտաքին տնտեսական կապերի ծավալման առումով գյուտերի դերը ակադեմիայի համար նշանակալից է։ Դրանք կարող են լավ հիմք հանդիսանալ արտասահմանյան ֆիրմաների հետ համատեղ ձեռնարկություններ ստեղծելու գործում։ Այդ հնարավորություններից օգտագործվելու նպատակով անհրաժեշտ է, որ ինստիտուտներում լուրջ աշխատանք տարվի արժեքավոր գյուտերը արտասահմանում արտոնագրելու ուղղությամբ։

Կիրառական աշխատանքների ցածր տոկոսի և ներդրման գործի վատ կազմակերպման պատճառ են գերատեսչական անհաղթահարելի պատնեշները։ Չկան արտադրական ձեռնարկությունների վրա ազդեցության ռեալ ուղիներ։ Նույնիսկ այն դեպքերում, երբ ներդրման համար մեծ շանքեր չեն պահանջվում, գործը առաջ է ընթանում անասելի դժվարություններով։ Հանրապետական մինիստրությունների և գերատեսչությունների անպատասխանատվության ցայտուն օրինակ է ցեմենտի գործարանների փոշու վերամշակման ու դրանից շինարարական աղյուսների պատրաստման առաջարկի ներդրման պատմությունը։ Այդ առաջարկությունը բազմիցս ներկայացվել է հանրապետության պետպլան, քննարկվել է Մինիստրների խորհրդում։ Սակայն երկար տարիների խոսակցություններն ավարտվեցին նրանով, որ հիշյալ աշխատանքը ներդրվեց հանրապետությունից դուրս՝ Նովոռոսիյսկի ցեմենտի գործարանում։

Անդրադառնալով գիտության բնագավառում վերակառուցման կարևորությանը, զեկուցողն ասաց, որ գիտության բաժանումը ակադեմիականի, ճյուղայինի և բուհականի, ըստ վարձատրության կատեգորիաների և այլն, գիտության կազմակերպման շատ այլ հնացած սկզբունքներ կաշկանդում են նրա զարգացումը։ Ինչպես հայտնի է, Հայաստանի գիտությունների ակադեմիան պատկանում է Միության առավել ուժեղ գիտական կենտրոնների թվին, չնայած դրան, նա էլ մյուս հանրապետությունների ակադեմիաների պես ֆինանսներ է մուրում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայից՝ իր նյութական խղճուկ գոյությունը պահպանելու համար։ Սա խոսում է ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ միութենական հանրապետություններում գիտությունը նորովի կազմակերպելու անհրաժեշտության մասին։ Կարծում ենք, որ դրան կնպաստի ԽՍՀՄ ԳԱ վերածումը ՌԽՖՍՀ ակադեմիայի, որով իսկ իրական հավասարություն կստեղծվի հանրապետական ակադեմիաների միջև։

Տարեկան ընդհանուր ժողովում զեկուցման շուրջ ծավալված քննարկմանը մասնակ-

ցեցին Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամներ Կ. Ղարագյոզյանը, Բ. Կարապետյանը, Գ. Տեր-Ստեփանյանը, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Գաբրիելյանը, Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի դիրեկտոր Ս. Հովհաննիսյանը: Նշվեց, որ ելնելով արդի պայմաններից, երկրում ընթացող դեմոկրատական գործընթացներից, պետք է գիտության մեջ իրականացնել որոշակի ապակենտրոնացում: Այժմ հարկավոր չէ շարունակել կենտրոնից կախյալ վիճակում գտնվել այնպիսի հարցերում, որպիսիք տնօրինում են, ասենք, Համամիութենական ատեստացիոն հանձնաժողովը կամ երկրի Դեղաբանական կոմիտեն: Դրանց նման հիմնարկներ կարելի է ունենալ հենց Հայաստանում: Նույնը վերաբերում է գիտության ֆինանսավորմանը: Տնտեսագիտության և ինքնաֆինանսավորման պայմաններում ճիշտ կլիներ այդ խնդիրը լուծել հանրապետությունում՝ կառավարական մակարդակով:

Լայն, շահագրգիռ խոսակցություն ծավալվեց բնական գազի հետ կապված պրոբլեմների շուրջ: Ամենից առաջ անհանգստություն է պատճառում հանրապետությունում սեյսմիկ ցանցի ստեղծման գործում հանդես բերվող աննրելի դանդաղկոտությունը: Իսկ առանց այդ ցանցի հնարավոր չէ բարձր մակարդակով աշխատանքներ իրականացնել երկրաշարժերի կանխագուշակման և սեյսմակայուն շինարարության ապահովման համար: Հարկ է լայն ուշադրություն դարձնել նաև գազի գոտուց դուրս գտնվող, մասնավորապես Երևանի շենքերի վիճակի բարելավմանը: Այդպիսի աշխատանք կատարելու համար օգնություն են ցույց տալիս արտասահմանի մեր հայրենակիցները: Խնդիրն այն է, որ ճիշտ գործադրվեն նրանց շանքերը, հատկացրած միջոցները, սարքավորումները: Մյուս կարևոր հարցը, որը նույնպես հատուկ ուշադրություն է պահանջում, բնակչության նախապատրաստումն է երկրաշարժերին: Այդ գործը բարձր հիմքերի վրա է դրված արտասահմանյան մի շարք երկրներում, հատկապես ԱՄՆ-ում, Ճապոնիայում և այլուր: Պետք է ընդօրինակել նրանց փորձը և միաժամանակ ստեղծել սեփականը: Այժմ այդպիսի աշխատանք է ձեռնարկվում Հայաստանի գիտությունների ակադեմիայում, պատրաստվում են համապատասխան նյութեր, հրատարակություններ: Այս հարցում հիմնականն այն է, որ այդ նպատակով տարվող աշխատանքը, որի մեջ ընդգրկված են տասը կազմակերպություն, կոորդինացվի, իսկ հատկացված ոչ մեծ միջոցները ծախսվեն արդյունավետ և ռացիոնալ:

Ժողովում գիտական դեկուցումներով հանդես եկան ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ռ. Ռ. Վարշամովը («Կիբառական մաթեմատիկայի՝ որպես ինֆորմատիկայի տեսական բազայի զարգացման մեթոդաբանական առանձնահատկությունները») և Ս. Վ. Գրիգորյանը («Ընդերքում թաքնված հանքավայրերի երկրաքիմիական մեթոդների գիտական հիմունքները»):

Տարեկան ժողովում տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր պարգևների հանձնման հանդիսավոր արարողություն: «Մեծարման գրով» պարգևատրվեցին ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Ղարիբյանը և Գ. Ջաճուկյանը: «Վաստակագիր» ստացան ակադեմիայի թղթակից անդամներ Ռ. Ստամբոլցյանը, Ս. Առեշատյանը, գիտության դոկտորներ Է. Վարդանյանը, Մ. Ջաղդյանը, Գ. Ապրիկյանը, Մ. Սարյանը: Մի խումբ գիտնականների հանձնվեց «Գովեստագիր»:

Ժողովը քննարկեց ՀԽՍՀ ԳԱ կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու հարցը, ինչպես նաև ԳԱ նախագահության ընտրությունների կանոնակարգը: